ՀԱՅԱՍՏԱՆ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի[1] համատեղ ներկայացրած զեկույցը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին Համընդհանուր պարբերական դիտարկման 21-րդ նիստ

Հունիս, 2014 թ.

Մաս II

---

[1] «Ազաթ» հատուկ կարիքներով կանանց կենտրոն, Գլոբալացման և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն, «Կրթության ասպարեզ» ՀԿ, «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի կենտրոն, Արմավիրի զարգացման կենտրոն, «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ, Առողջապահական, բնապահպանական և գյուղատնտեսական զարգացման «Բիոսոֆիա» ՀԿ, «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ, «Շիրակ» քաղաքական մշակույթի և համաձայնությունների զարգացման կենտրոն ՀԿ, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն, «Էկոդար» ՀԿ, «Էկոլոգիական իրավունք» ՀԿ, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան ՀԿ, «Ասպարեզ» լրագրողների ակումբ, Գիտակների «ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն ՀԿ, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ, «Առաքելություն Հայաստան» ՀԿ, «Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան», «Մանդատ» տեղեկատվական ՀԿ-ի «Parliamentmonitoring.am» կայք, «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ, «Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ, «Փրկենք Թեղուտը» քաղաքացիական նախաձեռնություն, «Save the Children», «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԿ, «Պետական կարիքների զոհեր» ՀԿ, «Մենք պլյուս» սոցիալական ՀԿ, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ և «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ:

Սույն զեկույցը պատրաստվել է քաղաքացիական հասարակության կառույցների դաշինքի համատեղ ջանքերով, որոնք հարուստ փորձ ունեն Հայաստանում մարդու իրավունքների խախտումների մշտադիտարկման, փաստագրման և զեկուցման բնագավառում: Զեկույցն անդրադառնում է հետևյալ ոլորտներին. **կանանց իրավունքներ**, **երեխայի իրավունքներ**, **առողջության իրավունք**, **առողջ և ապահով միջավայրում ապրելու իրավունք**, **կրթության իրավունք**, **աշխատանքի իրավունք**, **սեփականության իրավունք** և **մշակութային իրավունքներ**: Սույն զեկույցը պատրաստվել է բոլոր կազմակերպությունների հետ ընդգրկուն խորհրդակցությունների հիման վրա: Զեկույցում օգտագործված են նրանց կողմից իրականացված մշտադիտարկման և իրավապաշտպան աշխատանքների միջոցով անմիջականորեն հավաքագրված տվյալները: Զեկույցը ներկայացվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների անունից գործող՝ **«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի»** կողմից:

Հարցերի դեպքում դիմել՝

Մարիա Աղաջանյան
ծրագրերի ավագ համակարգող
Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
էլ-փոստ՝ maria@osi.am

Կարինե Ղազարյան
ծրագրերի համակարգող
Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան
էլ-փոստ՝ karine@osi.am

Բովանդակություն

Ներածություն..... 2
Կանանց իրավունքները..... 4
Երեխայի իրավունքները..... 8
Առողջության իրավունքը..... 11
Առողջ և ապահով միջավայրում ապրելու իրավունքը..... 17
Կրթության իրավունքը..... 21
Աշխատանքի իրավունքը..... 25
Սեփականության իրավունքը..... 28
Մշակութային իրավունքներ..... 31

Ներածություն

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների խմբի կողմից պատրաստված սույն տեղեկանքում ամփոփված են Հայաստանում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վիճակի՝ նրանց գնահատման արդյունքները համընդհանուր պարբերական դիտարկման (հետայսու՝ «ՀՊԴ») առաջին շրջափուլից հետո: Վերանայման նախորդ շրջափուլի ընթացքում՝ հինգ տարի առաջ, Հայաստանը քաղաքական դաշտի և մարդու իրավունքների ոլորտի առումով հայտնվել էր ճգնաժամում, որի պատճառներն էին կեղծված ընտրությունները և հետընտրական մահաբեր բռնությունը: Կառավարման համակարգի այդ քաղաքական ճգնաժամից զատ, Հայաստանը կրում էր համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքները: Նշված ճգնաժամերի միաժամանակյա ներգործությունը ծայրահեղ ծանր անդրադարձավ սոցիալապես խոցելի խմբերի վրա, և բնակչության խոշոր հատվածների համար սահմանափակվեց կրթության, առողջապահության և անգամ պարենի հասանելիությունը: Կտրականապես աճեցին գործազրկության և աղքատության ծավալները:

Համապետական հետազոտության արդյունքները վկայում են, որ բնակչությանը մտահոգող լրջագույն հինգ հիմնախնդիրներից է կոռուպցիան:[2] Կենտրոնացած կառավարման օլիգարխիկ համակարգը խրախուսում և ամրապնդում է ոչ ֆորմալ տնտեսության գերակայությունը, նվազեցնում առանց այն էլ չնչին ծավալներ կազմող պետական ծախսերը սոցիալական և մշակութային ոլորտներում, ոչ միայն առաջացնելով կոռուպցիոն չփարատված ռիսկեր, այլ նաև՝ վտանգելով սոցիալական ծրագրերը և մշակութային ժառանգությունը: Նշվածի վառ օրինակներից էր Ազգային ժողովի այն նիստը, որում գործազրկության նպաստները վերացնելու մասին որոշումը քվեարկությամբ հաստատելուց հետո որոշեցին ավելացնել պետական աշխատողների (ինչպես նաև պատգամավորների) աշխատավարձերը: Մշակույթի ծրագրերի և ծախսերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս հանրային կարծիքը հաշվի չի առնվում: Դրա մասին են վկայում Երևանում ներկայումս տեղի ունեցող երկու զուգահեռ գործընթացները. նախ, ի հեճուկս հանրային բողոքի զանգվածային ցույցերին, քաղաքապետարանը որոշել է Երևանի կենտրոնում կանգնեցնել Անաստաս Միկոյանի (խորհրդային շրջանի առաջնորդ, ով պատասխանատու է 1937 թվականի հանցագործությունների համար) արձանը: Զուգահեռաբար, կրկին ի հեճուկս երկար շարունակ-

[2] Թրանսփարենսի ինթերնեշնլ, «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013», աղբյուրը՝ http://www.transparency.org/gcb2013/country/?country=armenia

վող բողոքի ակցիաներին և միջնորդություններին, ապամոնտաժվում է Երևանի կենտրոնում գտնվող Աֆրիկյանների տունը, որը 2006-2008 թվականների ընթացքում պատմական կենտրոնի զանգվածային ոչնչացումից հետո կանգուն մնացած սակավաթիվ պատմական շինություններից է, և ապամոնտաժման ընթացքում բողոքի ցույցերի մասնակիցները բերման են ենթարկվում և մեղադրվում քրեական հանցագործությունների մեջ:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Գենդերային հավասարությունը քաղաքական կամ հայեցակարգային առաջնահերթություն չէ կառավարության համար: Դրա մասին է վկայում կանանց դեմ ուղղված խտրական գործելակերպի դրսևորումների հաղթահարման նպատակով իրականացվող միջոցառումների անբավարարությունը: «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվեց 2013 թվականին, առաջին անգամ պետական մակարդակով ամրագրվեց գենդերային հավասարության քաղաքականությունը և ռազմավարությունը: Օրենքը կատաղի դիմադրության արժանացավ և կանանց կազմակերպությունների հեղինակազրկման քարոզարշավի թիրախ դարձավ ազգայնական խմբերի և Կրեմլի սատարմամբ գործող քաղաքական տեխնոլոգների համար: Կառավարությունը հրաժարվեց դատապարտել ատելության սերմանումը կամ քայլեր ձեռնարկել օրենքի մասին ապատեղեկատվության տարածման դեմ, իսկ ոստիկանությունը, իր հերթին, հրաժարվեց քայլեր ձեռնարկել այդ կապակցությամբ ներկայացված հաղորդագրությունների առնչությամբ, անգամ երբ սպառնալիքները հնչեցվել էին պատգամավորների և քաղաքական այլ գործիչների կողմից:

Քաղաքական մասնակցությունը

Չնայած «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված օրենսդրական երաշխիքներին, պատգամավորների թվի ընդամենը 10.69%-ն են կանայք, և այս ցուցանիշով Հայաստանը զգալիորեն զիջում է Հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) թիրախներին: Իշխանության գործադիր ճյուղում 18 նախարարներից ընդամենը 2-ը և 56 փոխնախարարներից ընդամենը 7-ն են կանայք: Չկան կին մարզպետներ, քաղաքապետեր կամ փոխքաղաքապետեր, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանում:

Առաջարկություններ

- Փոփոխություններ կատարել ընտրական օրենսգրքում՝ բարձրացնելով և 30 տոկոսի հասցնելով համամասնական ընտրակարգով քաղաքական

կուսակցությունների ցուցակներում կանանց ներկայացվածության քվոտան, ինչպես նաև՝ ամրագրել նորմ, որի համաձայն այն դեպքում, երբ ընտրված կին պատգամավորը հրաժարվում է մանդատից, մանդատը պետք է փոխանցվի կուսակցության ցուցակում ներառված հաջորդ կին թեկնածուին:

Ընտանեկան բռնությունը

Ընտանեկան բռնությունն արմատացած է և լայն տարածում ունի: Չկան տուժողների պաշտպանության համարժեք իրավական մեխանիզմներ, և հստակորեն չի ընկալվում պաշտպանության շրջանակը: Տուժողների համար չկան օժանդակության ծառայություններ: Ոստիկանությունն ի սկզբանե խորհուրդ է տալիս նրանց՝ ձեռնպահ մնալ բողոք ներկայացնելուց: Դրա հետևանքով առաջացել է ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների պակաս: Ոստիկանության տվյալներով, 2012 թվականին արձանագրվել են ընտանեկան բռնության 766 դեպք, իսկ 2013 թվականին՝ 586-ը, մինչդեռ տեղական ՀԿ-ները պնդում են, որ այդ թիվը գերազանցում է 2000-ը:[3]

Ընտանեկան բռնության դեպքերի քննության և դատական վարույթների նկատմամբ բավարար վստահություն չկա: Տուժողները և նրանց ընտանիքի անդամները չեն հավատում, որ կիրականացվի արդարադատություն, և բռնարարը պատասխանատվության կենթարկվի:[4] Պաշտպանության ամբողջական մեխանիզմ նախատեսող առանձին օրենքի բացակայությունը լուրջ մարտահրավեր է ընտանեկան բռնության դեմ պայքարի ճանապարհին:

Ընտանեկան բռնության մասին օրենք պետք է ընդունվեր 2010 թվականին. այդ հանձնառությունը ստանձնվել էր Համընդհանուր պարբերական դիտարկման առաջին շրջափուլում: Կառավարությունը, սակայն, փաստարկում է, թե ընտանեկան բռնության մասին առանձին օրենք ունենալու անհրաժեշտություն չկա, քանի որ նոր քրեական օրենսգիրքը և «Սոցիալական աջակցության մասին» օրենքն անդրադառնալու են այս հիմնախնդրին: Հաշ-

[3] Տվյալները հրապարակավ ներկայացվել են ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության 3-րդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Նելլի Դուրյանի կողմից:

[4] Բռնության ենթարկված մի կնոջ պատմությունը վերջերս հանրային լուրջ ուշադրության արժանացավ, քանի որ նա 9 տարի տևած ամուսնությունից հետո վերջապես կարողացել էր փախչել ամուսնուց և քաջություն գտնել իր մեջ՝ ամուսնու դեմ մեղադրանք ներկայացնելու համար: Այդ գործի քննությունն առանձնապես դժվար էր, քանի որ բռնարարը և նրա ընտանիքը հայտնի անձինք էին և կապեր ունեին որոշումներ կայացնող կարևոր անձանց, այդ թվում՝ տեղի ոստիկանների հետ, ովքեր յուրաքանչյուր առիթով կրկին վիկտիմիզացնում էին տուժողին:

վի առնելով իրավիճակի ծանրությունը և իրավապահ մարմինների կողմից այն ոչ բավարար չափով կարևորելը, տուժողների լիարժեք պաշտպանությունը երաշխավորելու համար իսկապես անհրաժեշտ է ընտանեկան բռնության մասին առանձին օրենք:

Առաջարկություն

- Ընդունել ընտանեկան բռնության դեմ պայքարի մասին առանձին օրենք, որով կանանց նկատմամբ բռնությունը կորակվի որպես քրեական հետապնդման և պատժի ենթակա քրեական հանցագործություն և քաղաքացիական իրավախախտում:

Խտրականությունը զբաղվածության բնագավառում

Հայաստանում կանանց շրջանում նախկինի պես բարձր է գործազրկությունը: Նրանք շարունակվում են անհավասար չափով վարձատրվել: Պաշտոնապես գրանցված գործազուրկների 71%-ը կանայք են: Կանանց գործազրկությունն աշխատանքային առավել ակտիվ տարիքային խմբում (30-ից 39 տարեկան) գերազանցում է 60%-ը:[3] Այս խնդիրը պայմանավորված է անկանոն և անհավասար տնտեսական զարգացմամբ, որի հետևանքով գործազուրկ կանանց թիվը Հայաստանում վերջին մի քանի տարիներին աճել է ավելի քան 5,000-ով, մինչդեռ գործազուրկ տղամարդկանց թիվը մոտավորապես նույն չափով նվազել է: Գործազրկության ցուցանիշների գենդերային վերլուծությամբ բացահայտվում է նաև տարիքի և ամուսնական կարգավիճակի կարևորությունը. թեպետ 15-24 տարեկան երիտասարդ տղամարդկանց և կանանց դեպքում աշխատանք գտնելու հավանականությունը մոտավորապես նույնն է, գործազուրկ դառնալու և աղքատության պայմաններում հայտնվելու հավանականությունը կանանց շրջանում տղամարդկանց համեմատ կրկնակի բարձր է 40-44, 45-49 և 50-54 տարեկանների տարիքային խմբերում:

Կանանց միջին ամսական աշխատավարձը հավասար է տղամարդկանց միջին ամսական աշխատավարձի 64.4%-ին: Աշխատավարձի գենդերային տարբերությունը Հայաստանում պայմանավորված է ցածր վճարվող աշխատավայրերում կամ ոլորտներում (ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը, գիտությունը և մշակույթը) կանանց մեծաթվությամբ: Հանրային հատվածում չկան կարիերայի աճի և արժանապատիվ աշխատավարձի

հնարավորություններ, որի հետևանքով տեղի է ունենում որակյալ աշխատուժի արտահոսք և աշխատանքի արդյունավետության անկում:

Առաջարկություններ

- Ընդունել կոնկրետ օրենսդրական նորմեր, որոնցով կարագացվի կանանց նկատմամբ աշխատանքի ոլորտում խտրականության վերացման գործընթացը և փաստացի հավասար հնարավորություններ կապահովվեն կանանց համար աշխատաշուկայի բոլոր օղակներում:
- Կառավարությունը պետք է պոզիտիվ գործողությունների սկզբունքին համահունչ քվոտաներ ներդնի՝ պետության և համայնքների մասնակցությամբ ապահովելով կանանց համարժեք ներկայացվածությունը տնտեսության և պետական կազմակերպությունների ղեկավարման վերին օղակներում, ինչպես նաև՝ ընկերությունների տնօրենների խորհուրդներում:

ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Երեխայի իրավունքները կարգավորող օրենսդրությունն աղոտ է և չի երաշխավորում երեխաների իրավունքների լիարժեք մեխանիզմների գոյությունը Հայաստանում: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի հիման վրա 2012 թվականին իրականացված՝ Հայաստանի ուսումնասիրությունից հետո կառավարությունը հաստատեց Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ազգային նոր ծրագիրը: Նոր ծրագիրը նպատակաուղղված է Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի վերակառուցմանը և վերջինիս վերահսկողական գործառույթի ուժեղացմանը: Վերակառուցման նպատակն էր հանձնաժողովին վերապահել բավարար իրավասություններ և ապահովել բավարար ռեսուրսներ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումների արդյունավետ համակարգումն իրականացնելու համար: Այդ նպատակը, սակայն, չի իրագործվել, քանի որ հանձնաժողովը, որի նախագահն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչն է, դեռևս չափազանց ֆորմալ մոտեցում ունի իր գործառույթների նկատմամբ, և ապահովված չէ հանձնաժողովի համարժեք գործառնությունը:[5] Ընտանեկան օրենսգիրքը և «Երեխայի իրավունքների մասին» օրենքը ներառում են երեխաների դեմ ուղղված ֆիզիկական բռնության և այլ ոտնձգությունների արգելքը, սակայն չեն սահմանում կամ մասնավորեցնում բռնության տեսակները և չեն տալիս բռնության դեպքերի մասին հաղորդումներ ներկայացնելու արդյունավետ մեխանիզմներ: Երեխայի նկատմամբ բռնության/ընտանեկան բռնության դեպքերով քրեական գործեր սովորաբար չեն հարուցվում՝ պայմանավորված համարժեք մասնագետների և երեխայի պաշտպանության այլընտրանքային մեթոդների անբավարարությամբ: Շատ դեպքերում, բռնության ենթարկված երեխաների հետ աշխատող մասնագետները ստիպված են լինում ընդունել ընտանիքի նախապայմանները և երեխայի նախընտրությունները, քանի որ երեխային համապատասխան հաստատություններում տեղավորելը կարող է երեխային ավելի շատ ցավ և տառապանք պատճառել: Երեխան վերադառնում է տուն, որից կարճ ժամանակ անց կրկին հայտնվում է նույն վիճակի մեջ: Հայաստանը դեռևս չի վավերացրել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը:

[5] Երեխայի պաշտպանության ազգային հանձնաժողովի կանոնադրությունը: Աղբյուրը՝ https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2012/12/12_1295.pdf

Դաժան վերաբերմունքը և ֆիզիկական պատիժը

Հայաստանի օրենսդրությունը չի կանոնակարգում բռնության և ոտնձգության տարբեր ձևերի ենթարկված երեխաների համար խնամքի, վերականգնման և հասարակություն վերադարձի ամբողջական ծառայությունների մատուցումը, որոնք հնարավոր կդարձնեին երեխաների հոգեբանական ամոքումը և լիարժեք սոցիալացումը: Ավելին, վերջին մի քանի տարիներին ավելացել է երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին հաղորդումների թիվը, սակայն հաղորդումների կապակցությամբ իրավասու մարմիններն արագ կամ համաչափ քայլեր չեն ձեռնարկում: Երեխայի նկատմամբ բռնության և այլ ոտնձգությունների դեպքերի մասին վերջերս հաղորդում էին ներկայացրել Բյուրեղավանի գիշերօթիկ դպրոցի մի խումբ ուսուցիչներ:[6] Ուսուցիչները բաց նամակ էին հրապարակել, որում մանրամասնորեն նկարագրում էին խախտումների տարբեր տեսակները և երեխաների նկատմամբ դպրոցի տնօրեն Գայանե Մարգարյանի կողմից կիրառվող բռնությունը: Լրագրողների հետաքննությամբ պարզվեց, որ Գ. Մարգարյանը վայելում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնատար անձանց հովանավորչությունը, ովքեր ակտիվորեն պաշտպանում էին նրան և փորձում էին ճնշել աշակերտներին և դպրոցի աշխատողներին, որպեսզի նրանք ետ վերցնեն իրենց ցուցմունքները: Ավելի ուշ հասարակական կազմակերպությունների և իրավապաշտպան ակտիվիստների խումբը դպրոցում տիրող իրավիճակի մասին բաց հաղորդում[7] հրապարակեց՝ ուղղված Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, պահանջելով գործի թափանցիկ և անկողմնակալ քննություն իրականացնել: Նորանշանակ վարչապետի անձնական միջամտության արդյունքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք նախազգուշացվեցին, իսկ դպրոցի տնօրենը հեռացվեց աշխատանքից: Թեպետ քրեական գործի քննությունը ներկայումս շարունակվում է, աշակերտների նկատմամբ գործադրված բռնության և դաժան վերաբերմունքի համար ոչ մեկին մեղադրանք չի ներկայացվել:[8] Չնայած երեխայի բռնության մի շարք դեպքերի մասին վերջերս ներկայացված աղմկահարույց հրապարակումներին, այս ոլորտում դեռևս լրջագույն բարելավումների անհրաժեշտություն կա:

---

[6] «168 hours» առցանց: Աղբյուրը՝ http://168.am/2014/04/04/349231.html
[7] «168 hours» առցանց: Աղբյուրը՝ http://168.am/2014/04/23/356922.html
[8] «Հետք» առցանց: Աղբյուրը՝ http://hetq.am/arm/news/54030/byurexavani-gisherotik-hastatutyan-tnjuky-inchu-e-pokhnakharar-berikyany-pashtpanum-tnorenin.html/
«168 hours» առցանց: Աղբյուրը՝ http://168.am/2014/04/08/350754.html

Առաջարկություններ

- Իրականացնել ԵԻԿ-ի ուսումնասիրության արդյունքում ներկայացված դիտողությունների մեջ արված բոլոր առաջարկությունները:
- Մշակել Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարության կատարման ուղղությամբ փաստացի առաջընթացի գնահատման ցուցանիշներ և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել Երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը հնարավոր դարձնելու ուղղությամբ:
- Ձևավորել անչափահասների արդարադատության համակարգ և երաշխավորել դրա գործունեությունը, ներառյալ՝ անչափահասների գործերով մասնագիտացած դատարանների և հավուր պատշաճի վերապատրաստված դատավորների գործունեությունը:
- Վավերացնել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Թեպետ առողջության իրավունքը երաշխավորված է օրենքով, առողջության հասանելիության հարցում լայն տարածում ունի խտրականությունը. սոցիալապես մարգինալացված կամ խոցելի խմբերը զրկվում են ծառայություններից կամ բարձր ծախսերի պատճառով կրում անհամամասնորեն ծանր ազդեցության հետևանքները:[9] Թեպետ պետությունը սոցիալապես մարգինալացված կամ խոցելի խմբերի համար երաշխավորում է անվճար բուժօգնությունը, այդ իրավունքի իրականացումը երաշխավորելու համար չկան արդյունավետ մեխանիզմներ: Կառավարության կողմից սուբսիդավորվող համավճարների համակարգը գործում է 2011 թվականից՝ ծախսերի առնվազն 50%-ի չափով: Հաշվի առնելով, որ աղքատության ցուցանիշը 2008 թվականի 17.4%-ի փոխարեն 2012 թվականին հասել է 32.4%-ի, որին զուգահեռ զգալիորեն ավելացել է հիվանդացությունը,[10] համավճարների համակարգը լրջագույն բեռ է առաջացնում բնակչության խոցելի խմբերի համար և կարող է երկարաժամկետ հատվածում ծանր և անշրջելի վնաս պատճառել անձանց առողջությանը:

Համայնքահեն ծառայությունների հասանելիությունը

Նախկինի պես խնդրահարույց է համայնքահեն ծառայությունների հասանելիությունը մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար, չնայած որ երկիրը վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան և հաստատել է Հոգեկան առողջության ազգային ռազմավարությունը: Հոգեկան առողջության ծառայությունները շարունակում են մատուցվել հոգեբուժական հաստատություններում, որտեղ կիրառվում է հարկադիր հիվանդանոցագրում, որը հանգեցնում է խնամառուների նկատմամբ դաժան վերաբերմունքի և բռնության: Խնամառուներից շատերը դատարանի որոշմամբ ենթարկվում են հարկադիր բուժման, և կարող են ազատ արձակվել միայն դատարան դիմելու միջոցով, ընդ որում՝ դիմելու իրավունքը վերապահված է բուժումն իրականացնող հիվանդանոցի վարչակազմին: 2010-2013 թվականներին Հայաստանի դատարանները ստացել են քաղաքացիներին հոգեբուժական հիվանդանոցներում հարկադրաբար բու-

[9] ՏՍՄԻՄԴ, ՄԻԵԿ, ԵՍԽ (1996 թ.), ՀԱԻԿ, ԿԽՎԿ, ԵԻԿ, ՔՔԻՄԴ:

[10] Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, մամլո հաղորդագրություն, 26-ը նոյեմբերի, 2013 թ.: Աղբյուրը՝ http://www.armstat.am/file/doc/99477213.pdf

ժելու մասին 190 միջնորդություններ, որոնցից 151-ը բավարարվել են, 39-ը՝ մերժվել:[11] Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հարկադիր բուժման մասին գոյություն ունեցող բժշկական և իրավական նորմերի հետևանքով խախտվում է ազատության իրավունքը, քանի որ տուժող անձի համար չկան ինստիտուցիոնալացման մասին որոշումն անմիջականորեն բողոքարկելու մեխանիզմներ:

Առաջարկություն

- Ապահովել այլընտրանքային խնամքի պետական ծառայությունների (որոնք երաշխավորված են 2014 թվականի ապրիլի 23-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության հոգեկան առողջության ռազմավարությամբ) հասանելիությունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար:

Առողջապահական ծառայությունների և հիմնական դեղերի հասանելիությունը

Ներարկային թմրամիջոցներ օգտագործողները («ՆԹՕ-ներ») հաճախ խոչընդոտների են հանդիպում մեթադոնային փոխարինման ծրագրի («ՄՓԾ») հասանելիության հարցում: ՄՓԾ-ի ազգային կլինիկական ուղենիշները և ՄՓԾ-ի ծրագրում կիրառվող գործելաոճը չեն համապատասխանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնարարականներին և առաջացնում են ծրագրից օգտվելու՝ խնամառուների իրավունքների խախտումներ: Առկա մոտեցումները և դիրքորոշումները նաև մարդկանց դրդում են չդիմելու թմրադեղերից կախվածության բուժման: Հերոինի և ափիոնային այլ թմրամիջոցների ներարկման մոլուցքը նվազեցնող այս կարևորագույն դեղամիջոցի՝ մեթադոնի նշանակումը խստագույնս վերահսկվում է ոստիկանության կողմից: Ոստիկանների համար հասանելի են խնամառուների անձնական և բժշկական գաղտնի տվյալները:[12] Ոստիկանները նաև անդամակցում են Ընտրող հանձնաժողովին և որոշումներ են կայացնում խնամառուների՝ ծրագրի մեջ ընդգրկման վերաբերյալ:[13] Այս գործելաոճը շարունակվում է, թեպետ առողջության իրավունքի պաշտպաննե-

[11] Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտ, 2010, 2011, 2012 և 2013 թվականներին քաղաքացիական գործերի քննության մասին զեկույցներ:
[12] Հայաստանի մեթադոնային պահպանության առաջին ծրագրի այցելության զեկույցը, 7-10-ը դեկտեմբերի, 2009 թ., Հոլի Կատանիա, ԲՀՀ-Հայաստանի խորհրդատու:
[13] Ոստիկանությունը ներկայացված է Երևանի հանձնաժողովում: Քրեակատարողական հիմնարկներում հանձնաժողովի կազմում են նաև բանտի վարչակազմի ներկայացուցիչները:

որը բազմիցս խնդրել են պահպանել գաղտնիությունը: ՆԹՕ-ների մեզի անալիզներում ապօրինի թմրամիջոցների հայտնաբերումը բժիշկների կողմից նույնպես վերահսկվում է ոստիկանության կողմից՝ հանգեցնելով վարչական տույժերի նշանակմանը: Խնամառուի կողմից դիմումը ներկայացնելու պահից մինչև բուժումը փաստացի սկսելու պահը հաճախ անցնում է մեկ ամիս կամ ավելի, որը նույնպես հակասում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության հանձնարարականներին:

Կառավարությունն իրավական դաշտի և քաղաքականության մի շարք բարեփոխումներ է նախաձեռնել, որոնց նպատակը ցավամոքիչ (պալիատիվ) խնամքի ներառումն է առողջապահության ընդհանուր համակարգում: Հաստատվել է Պալիատիվ խնամքի ազգային հայեցակարգը: Հիմնական դեղերի ցանկում կատարվել են փոփոխություններ՝ ներառելով կարճատև և երկարատև ազդեցության ափիոնային դեղամիջոցներ: Մշակվել, սակայն դեռևս կառավարության կողմից չեն հաստատվել թմրամիջոցների մասին օրենքը, ցավի կառավարման ազգային ուղենիշները և պալիատիվ խնամքի չափորոշիչները: Ցավամոքիչ հիմնական դեղերը ձեռք բերելը մինչ օրս շատ դժվար է, և հիվանդանոցային պայմաններից դուրս ցավի զսպման խնդիրը լուծելը գրեթե անհնար է, քանի որ դեղատների աշխատանքի կանոնները և կանոնակարգերը կիրառվում են որոշակի սահմանափակումներով: Ավելին, առկա գործելաոճի համաձայն, ցավամոքիչ խնամքի ծառայություններ մատուցողները պարտավոր են ոստիկանությանը տեղեկություններ տրամադրել մորֆին ստացող բոլոր խնամառուների մասին: Դա խնամառուի մասնավոր գաղտնիքի իրավունքի խախտում է, չնայած որ այդ իրավունքը պաշտպանված է թե՛ ազգային օրենսդրությամբ, թե՛ միջազգային իրավունքի նորմերով:[14] Չնայած որ դեղամիջոցների չափազանց խիստ կանոնակարգման և ցավամոքման համարժեք միջոցների բացակայության հետևանքով երկրում հազարավոր մարդիկ տառապում են սուր ցավից, 2014 թվականին նվազել է հաշվառված ներարկային մորֆինի օգտագործման ցուցանիշը:[15]

[14] ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելու համար: «Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս. գործնական ուղեցույց», Հայաստան, 2010 թ.: Աղբյուրը՝ http://www.healthrights.am/docs/pg_eng.pdf

[15] Արֆարմացիայի տվյալներով, մորֆինի սպառումը/իրացումը 24%-ով նվազել է ամբուլատոր հիվանդների շրջանում Երևանում 2013 թվականին (21,868 սրվակ)՝ 2012 թվականի (28,725 սրվակ) համեմատությամբ: Բացի դրանից, թմրամիջոցների քվոտան 2014 թվականի համար չափազանց ցածր է (4,500 գրամ մորֆին), և 2500 անձանցից ընդամենը 250-ը կկարողանան ցավամոքիչ համարժեք դեղորայք ստանալ:

Առաջարկություններ

- Բացառել իրավապահ մարմինների պաշտոնյաների մասնակցությունը ՄՓԾ ընտրող հանձնաժողովին, և ՄՓԾ-ի ազգային կլինիկական ուղեցույցները համապատասխանեցնել Առողջապահության համաշխարհային կազմակերպության[16] հանձնարարականներին:
- Գրանցել, գնել և նշանակել հաբի տեսքով մորֆինը՝ կյանքի համար վտանգավոր հիվանդություններ ունեցող անձանց ցավի ամոքման նպատակով:

Որակյալ ծառայությունների հասանելիությունը փակ հաստատություններում

Բժշկական ծառայությունների որակը քրեակատարողական հաստատություններում և բանակում ցածր է, քանի որ այդ հաստատություններն ապահովված չեն որակյալ ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ կադրերով և տեխնիկական միջոցներով: Ազատազրկված անձանց ստիպում են ամսական 50,000-60,000 դրամ (ավելի քան 100 եվրո) վճարել հիվանդանոցում պահվելու համար, ինչպես նաև՝ լրացուցիչ 5,000 դրամ (մոտ 10 եվրո) վճարել կամ 10 լիտր բենզին գնել հիվանդանոց տեղափոխվելու համար: Զորակոչի փուլում չի իրականացվում լիարժեք հետազոտություն, իսկ ծառայության ընթացքում չեն իրականացվում կանոնավոր հետազոտություններ, որի հետևանքով բանակում վատթարանում է առողջական վիճակը: Դրա վկայությունը զորակոչիկների և զինծառայողների՝ առողջության հետ կապված բողոքների հաճախականությունն է: 2010-2013 թվականներին «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ին դիմած 112 զորակոչիկներից և զինծառայողներից 80-ն ունեցել են առողջության հետ կապված խնդիրներ, ներառյալ՝ ոչ բավարար բուժգննությունը կամ բուժումը: Ավելին, որակյալ բուժօգնության բացակայության պատճառով 2010-2013 թվականներին զինծառայության ընթացքում մահացել է 17 զինծառայող: Հարկ է հիշատակել, որ անբավարար բուժծառայությունների պատճառով արձանագրված մահվան դեպքերի թիվը 2012-2013 թվականներին 2011 թվականի համեմատ աճել է 50%-ով:

---

[16] Guidelines for the Psychosocially Assisted Pharmacological Treatment of Opioid Dependence, Retrieved from http://www.who.int/substance_abuse/publications/opioid_dependence_guidelines.pdf

[17] *Աշոտ Հարությունյանն ընդդ. Հայաստանի (2010 թ.),* դիմում թիվ 34334/04, Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ոչ համարժեք բուժօգնություն ազատազրկման վայրում՝ 3-րդ հոդվածի խախտում): Աղբյուրը՝ http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-99403#{"itemid":["001-99403"]}

Առաջարկություններ

- Ապահովել պետական անվճար որակյալ բուժօգնության հասանելիությունն ազատազրկված անձանց և զորակոչիկների համար՝ կառավարության 318-Ն որոշմամբ երաշխավորված կարգով:
- Ապահովել անվտանգության/ոստիկանական ուժերի կողմից ազատազրկված անձանց կողմից դաժան վերաբերմունքի մասին բողոքների քննությունը և բռնարարներին պատասխանատվության ենթարկելը (2010 թվականի ՀՊԴ, թիվ 26 առաջարկություն):[17]

Անվճար դեղորայքի և ծառայությունների հասանելիությունը

Բուժհիմնարկներում անվճար բուժօգնություն ստանալու՝ տարեց թոշակառուների իրավունքը պետք է որ երաշխավորված լինի պետության կողմից: Այդ իրավունքը պարբերաբար խախտվում է՝ պայմանավորված պոլիկլինիկաներում անվճար դեղորայքի տրամադրման ուշացումներով:[18] Տարեցներին հաճախ ստիպում են ոչ պաշտոնական վճարումներ կատարել դեղորայքի և հիվանդանոցային ծառայությունների համար:[19] Հաշմանդամություն ունեցող երեխաների պարբերական պարտադիր բժշկական հետազոտությունները[20] չեն կատարվում ժամանակին և պատշաճ որակով:

Լայն տարածում ունի խարանը ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց նկատմամբ (ընդհանուր մոտավոր թիվը Հայաստանում՝ 3,500), որի հետևանքով նրանք զրկվում են բուժումից և հիմնական դեղերից:[21] Անվճար դեղերի ցանկը հաստատելու մասին կառավարության որոշումը[22] չի ապահովում հակառետրովիրուսային թերապիայի առկայությունը կամ հասանելիությունը:[23] ՄԻԱՎ-ի թեստավորումը հավուր պատշաճի չի կազմակերպվում մարզերում. ՄԻԱՎ-ի անանուն թեստավորումն առկա է միայն Երևանում, այն էլ՝ մեկ վայրում:

---

[17] UPR Watch. Retrieved from http://www.upr-epu.com/ENG/country.php?id=173

[18] Անվճար դեղորայք ստանալու իրավունքը երաշխավորված է անմիջական ընտանիքի անդամներ չունեցող կամ 75 տարեկանից բարձր տարիք ունեցող թոշակառուներին:

[19] «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի հավաքագրած տվյալները, http://www.mission.am/en/index.php

[20] Քաղաքացիական հասարակության դիտորդների անկախ խմբի մոնիթորինգային զեկույցները 2010-2011 թթ., 2012 թ., 2013 թ. համար:

[21] Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, ՁԻԱՀ-ի կանխարգելման ազգային կենտրոն, «Վիճակագրությունը. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակը Հայաստանի Հանրապետությունում»: Աղբյուրը՝ http://armaids.am/main/free_code.php?lng=1&parent=3

[22] «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1717-Ն որոշումը: Աղբյուրը՝ http://www.healthrights.am/docs/pg_eng.pdf

[23] ՄԻԱՎ-ի՝ 2012 թվականին գրանցված բոլոր դեպքերի կեսի ուշ ախտորոշման պատճառով անձանց 9.2%-ը մահացել է ախտորոշումը հաջորդող 3 ամիսների ընթացքում:

Առաջարկություններ

- Ապահովել պետական անվճար բուժօգնության հասանելիությունը հասարակության խոցելի խմբերին և բնակչության որոշակի խմբերին՝ կառավարության թիվ 318-Ն որոշմամբ երաշխավորված կարգով:
- Երաշխավորել ՄԻԱՎ-ի թեստավորման անանուն և գաղտնի ծառայությունների պատշաճ հասանելիությունը և երաշխավորել հակառետրովիրուսային թերապիայով բուժման հասանելիությունը:

ԱՌՈՂՋ ԵՎ ԱՊԱՀՈՎ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Հայաստանում ընդունված չէ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին օրենք, թեպետ Համաշխարհային բանկի նկատմամբ այդ հանձնառությունը ստանձնվել էր դեռ 2003 թվականին: Չնայած որ Հայաստանը վավերացրել է Օրհուսյան կոնվենցիան, դեռևս չի ապահովվում հանրության մասնակցությունը շրջակա միջավայրին վերաբերող որոշումների կայացմանը: Ավելին, դեռևս լուծված չէ ռեսուրսների շահագործումը կարգավորող քաղաքականությունների թափանցիկության ապահովման խնդիրը: Բնական պաշարների ինտենսիվ շահագործումը շարունակվում է, և ռեսուրսների կառավարմանը վերաբերող որոշումները սպասարկում են նեղ խմբի շահերին՝ հաշվի չառնելով հանրության երկարաժամկետ բարօրության և ինքնահարատ զարգացման նկատառումները:

Կառավարությունը հանրության առողջությունը պաշտպանելու որոշակի պարտավորություն չի կրում. առողջության կանոնավոր հետազոտություններ չեն անցկացվում, չկան պաշտոնական տվյալներ մոտակա հանքերում գտնվողների առողջական վիճակի մասին, և գոյություն չունեն արդյունաբերական աղտոտման վնասները կրողներին փոխհատուցման տրամադրման մեխանիզմներ:

Օրհուսյան կոնվենցիայի կատարումը՝ որպես առողջ և ապահով միջավայրի իրավունքի երաշխիք

Հայաստանը շարունակում է ձախողել Օրհուսյան կոնվենցիայի երեք բաղադրիչներից բխող՝ իր հանձնառությունների կատարումը. այդ բաղադրիչներն են տեղեկատվության հասանելիությունը, հանրության մասնակցությունը շրջակա միջավայրին առնչվող որշումների կայացմանը և արդարադատության հասանելիությունը: Կառավարությունը սեփական նախաձեռնությամբ հանրությանը տեղեկություններ չի տրամադրում շրջակա միջավայրի աղտոտման և դրա հետևանքով առաջացող ռիսկերի մասին: Մասնավորապես, Բնապահպանության նախարարությունը վտանգավոր թափոններ առաջացնող սուբյեկտներին չի պարտավորեցնում տվյալներ ներկայացնել իրենց՝ թափոններ առաջացնող գործունեության և դրա հետևանքնե-

րի մասին: Վերահսկիչ պալատի 2012 թվականի ընթացիկ զեկույցում[24] բացահայտվում է, որ վտանգավոր թափոններ առաջացնող սուբյեկտների 79 տոկոսը որևէ տեղեկություններ չի տրամադրել նախարարությանը, որը հղի է նաև կոռուպցիոն ռիսկերով: Հանքարդյունաբերական ձեռնարկությունները խախտում են իրենց լիցենզիաներով սահմանված հանքահանման սահմանաչափերը:[25]

Շարունակաբար խախտվում է որոշումների կայացման գործընթացին մասնակցելու՝ քաղաքացիների իրավունքը. այդ փաստը հաստատվել է Օրհուսյան կոնվենցիայի պահանջների կատարման հանձնաժողովի եզրակացությամբ: Հանրային լսումներում չի երաշխավորվում համայնքի իրազեկված մասնակցությունը, քանի որ չկա օրենսդրություն շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացմանը հանրության մասնակցության կարգի վերաբերյալ:[26] Ավելին, բնապահպանական ՀԿ-ները զրկվում են անօրինական որոշումները բողոքարկելու նպատակով դատարան դիմելու իրավունքից:[27] Հանձնաժողովը խորհուրդ է տվել փոփոխություններ կատարել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում և վարչական դատավարության օրենսգրքում, որպեսզի ՀԿ-ներին վերապահվի վարչական մարմինների որոշումները և գործողությունները դատարանում վիճարկելու իրավունքը: Հայաստանն առ այսօր որևէ քայլեր չի ձեռնարկել Օրհուսյան կոնվենցիայի պահանջների կատարման հանձնաժողովի հանձնարարականները կատարելու ուղղությամբ:

Առաջարկություններ

- Ընդունել օրենսդրություն՝ սահմանելով շրջակա միջավայրին առնչվող հանրային շահերի վիճարկման հայցերով դատարան դիմելու՝ բնապահպանական ՀԿ-ների իրավունքը:
- Դադարեցնել Թեղուտի հանքի անօրինական շահագործումը, որպեսզի կատարվեն Օրհուսյան կոնվենցիայի պահանջների կատարման հանձնաժողովի որոշումներով վերահաստատված՝ Հայաստանի միջազգային հանձնառությունները:

---

[24] Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի փետրվարի 10-ի 3/4 որոշումը «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների օգտագործման (վերամշում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում) նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ»:

[25] Բնապահպանության նախարարության և էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից բնապահպանների խմբերին տրամադրված տվյալների հիման վրա:

[26] Օրհուսյան կոնվենցիայի պահանջների կատարման հանձնաժողով, թիվ ACC/C/2009/43:

[27] Օրհուսյան կոնվենցիայի կատարման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 16-ի թիվ ACCC/C/2011/62 որոշումը:

- Վավերացնել «Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին» արձանագրությունը և վերջինիս համահունչ ստեղծել առկա թունավոր աղտոտիչների՝ հանրությանը հասանելի տվյալների շտեմարան:

Զրահիրավունքը

Հանքարդյունաբերական գործունեության ծավալների ընդլայնումը, փոքր հիդրոէներգակայանների անպատասխանատու կառուցումը և ձկնաբուծական տնտեսությունների թվի ավելացումը վտանգում են ջրի որակը և հասանելիությունը Հայաստանում: Հանքարդյունաբերական գործունեության[28] հետևանքով աղտոտվում են գետերը, մասնավորապես՝ անդրսահմանային Դեբեդ, Ողջի և Արաքս գետերը:

Չնայած Սևանա լճի ավազանում վերամշակման գործունեության ուղղակի արգելքին,[29] լիճն աղտոտվում է Սոթքի ոսկու հանքի գործունեության հետևանքով:[30] Ընկերությունը լճի ավազանում տեղադրել է ջարդման-տեսակավորման կայան, և քաղաքացիական հասարակության ունեցած տվյալներով Սևանի ավազանի երկու գետերում հանքից ստացվող ներհոսքի պատճառով արդեն իսկ բարձր է մկնդեղի, սուրմայի և խիստ թունավոր այլ մետաղների պարունակությունը: Վտանգի պոտենցիալ աղբյուր է հանքարդյունաբերական մյուս ծրագիրը՝ Ամուլսարի ոսկու հանքը,[31] և Բնապահպանության նախարարության կողմից հաստատվել է հանքի շահագործման ծրագրի բնապահպանական բաղադրիչը՝ ի հեճուկս Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի բացասական եզրակացությանը: Սևանը վտանգված է նաև ձկնաբուծական տնտեսության ընդլայնման հետևանքով, որը նախատեսում է արտանետել ազոտով և ֆոսֆորով հարստացված արհեստական կերը: Փորձագետների կարծիքով, դա կհանգեցնի լճի էվտրոֆիկացիայի:[32]

---

[28] Ալավերդու պղնձաձուլական գործարան («Armenian Copper Program» LLC), Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ
(“Metal Prince” LTD), Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ (60%-ը պատկանում է «CRONIMET Mining GmbH»-ին), Կապանի լեռնահարստացման կոմբինատ (“Dundee Precious Metals Kapan” CJSC) և Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ (“Geopromining Gold” LLC):

[29] «Սևանա լճի մասին» օրենքի 10-րդ հոդված:

[30] Սոթքի ոսկու հանքը շահագործվում է «Geopromining Gold» ՍՊԸ-ի կողմից:

[31] Ամուլսարի ծրագիրը պլանավորվում է իրականացնել բացահանքի եղանակով, տեղում հանքաքարը հարստացնելու միջոցով:

[32] «Էկոլուր» ՀԿ, http://www.ecolur.org/en/news/sos/initiators-to-make-sevan-a-fish-farm-didnvt-convince-environmentalists/5723/

Ջկնաբուծական տնտեսությունների զարգացումը խթանելու նպատակով կառավարությունը թույլատրել է մեծաթիվ ջրհորների շահագործումն Արարատյան դաշտավայրում, որն իր հերթին հանգեցրել է ստորգետնյա ջրի պաշարների ծավալի նվազեցմանը: Կառավարության թույլտվությունը ստացվել է՝ չիրականացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության որևէ վերլուծություն: Արդյունքում նվազել են ջրային պաշարները, որոնք անհրաժեշտ են թե՛ դաշտավայրի ոռոգման, թե՛ կենսական սպառման համար:[33] Փոքր հիդրոէներգակայանների («ՀԷԿ-եր») չափազանց ակտիվ շահագործումը նույնպես վտանգում է Հայաստանի գետերը, որի մասին վկայում են «էկոլուր» ՀԿ-ի իրականացրած հետազոտությունները:[34] Ներկայումս գոյություն ունեն ավելի քան 150 փոքր ՀԷԿ-եր, որոնցից 100-ը՝ 47 գետերի վրա, և այդ գետերից 16-ը դրանց պատճառով հայտնվել են աղետալի, իսկ 3-ը՝ կրիտիկական վիճակում:

Առաջարկություններ

- Դադարեցնել մետաղական նոր հանքավայրերի համար թույլտվությունների տրամադրումն այնքան ժամանակ, քանի դեռ չեն մշակվել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պատշաճ մեթոդաբանություններ:
- Կիրառել «Սևանա լճի մասին» օրենքի 10-րդ հոդվածը և լճի ավազանում արգելել վերամշակման ցանկացած գործունեություն:
- Ճշգրտել փոքր հիդրոէներգակայանների զարգացման ծրագիրը՝ դրանց կառուցման համար ամրագրելով հստակ սահմանափակումներ, հաշվի առնելով ջրային էկոհամակարգերը և ջրի որակը պահպանելու անհրաժեշտությունը:
- Սահմանել Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրային պաշարների օգտագործման թույլատրելի սահմանաչափ՝ բացառելով ավելորդ ջրօգտագործման հետևանքով ջրի վերականգնվող պաշարի խաթարումը:

[33] Հայաստանի հանրային ռադիո: Աղբյուրը՝ http://www.armradio.am/hy/2014/03/18/%D6%83%D5%B8%D5%AD%D5%BE%D5%A1%D6%80%D5%B9%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF-%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A1%D5%BF%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%B7%D5%BF%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B5%D6%80%D5%AB-%D5%BD/

[34] Վ. Բուռնազյան, Տ. Գրիգորյան, Մ. Երիցյան և Ի. Զարաֆյան, «Փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) սոցիալ-էկոլոգիական ազդեցության վերլուծություն», http://www.osf.am/wp-content/uploads/2014/05/Victoria_Burnazyan_Policy_paper.pdf

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Չնայած բարեփոխումներին, բազմաթիվ ուսումնասիրություններ վկայում են[35] կրթության որակի, հասանելիության և հավասար հնարավորությունների վիճակի վատթարացման մասին: Երեխաների համար հնարավորությունների անհավասարության պատճառներն են անբավարար օրենսդրությունը, անհամարժեք ֆինանսավորումը և լայնատարած կոռուպցիան: Կրթական ոլորտը կարգավորող օրենսդրությունը բավարար չէ և հանգեցնում է կրթական հաստատությունների ֆինանսների, կառավարման, ղեկավարների նշանակման, մասնագիտացումների և ընդունելությունների նկատմամբ պետության անհարկի միջամտությունների:

Թրանսփարենսի ինթերնեշնլ կազմակերպության «Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր» ուսումնասիրության 2013 թվականի տվյալներով, բնակչության 59%-ը համարում է, որ կրթությունը երկրում առավել կոռումպացված ոլորտների թվում զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը: Այդ մասին է վկայում նաև «Policy Forum Armenia» կազմակերպության կողմից պատրաստված՝ Հայաստանում կոռուպցիայի մասին զեկույցը:[36] Համակարգային այս կոռուպցիայի հետևանքով սահմանափակվում են որակյալ կրթության հնարավորությունները բնակչության մեծ մասի, հատկապես՝ բնակչության այն 32.4%-ի համար, ովքեր ապրում են աղքատության շեմի պայմաններում կամ դրանից ներքև:[37] Միևնույն ժամանակ, կրթության վրա ծախսվող գումարները շարունակում են նվազել, և հաջորդ երեք տարիներին նվազելով հասնելու են ՀՆԱ-ի 2.56 տոկոսին: Այնուհանդերձ, Կրթության զարգացման 2011-15 թթ. պետական ծրագրով նախատեսված է, որ 2015 թվականին կրթության՝ պետական բյուջեից հատկացվող ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 4%-ը:

---

[35] Kataoka Sachiko, Shahverdyan Anush, Harutyunyan Hovhannes. 2013. Addressing governance at the center of higher education reforms in Armenia. Washington DC. World Bank. Retrieved from http://documents.worldbank.org/curated/en/2013/01/17748657/addressing-governance-center-higher-education-reforms-armenia.

[36] Transparency International, Global Corruption Barometer Armenia-2013. Retrieved from http://www.transparency.org/gcb2013/country/?country=armenia

[37] Հայաստանի վիճակագրական ծառայություն: Աղբյուրը՝ http://www.armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf

Կրթության հասանելիությունը, որակը և հավասար հնարավորությունները

Բնակչության խոցելի խմբերի, մասնավորապես՝ կարիքավոր ընտանիքների, հեռավոր գյուղական բնակավայրերի կամ փոքրամասնությունների խմբերի երեխաների համար ապահովված չեն դպրոցական և համալսարանական կրթության ստացման հավասար հնարավորությունները: Ավագ դպրոցում կրթությունը մեծ մասամբ հասանելի չէ գյուղական բնակավայրերի աշակերտներին: Հանրակրթական 109 ավագ դպրոցներից ընդամենը 7-ն են գտնվում գյուղերում:[38] Գյուղական բնակավայրերում դեռևս կան դպրոցներ, որոնք աշխատում են 12-ամյա կրթության հնացած ուսումնական ծրագրով: Այդ դպրոցները չեն կարողանում կատարել ավագ դպրոցի առարկաների կրեդիտային համակարգին անցնելու՝ կառավարության ծրագրի պահանջները: Ուստի, ավագ դպրոցների շրջանավարտները կրկնակի առավելություն կունենան 12-ամյա կրթության ուսումնական ծրագրով սովորողների նկատմամբ: Հաշվի առնելով գյուղական բնակավայրերում աղքատության և խոցելիության ավելի բարձր ցուցանիշները, ինչպես նաև քաղաքային դպրոցների համեմատությամբ այնտեղի դպրոցների մասնագիտական և տեխնիկական հնարավորությունների սահմանափակությունը, անբարենպաստ տարբերությունն էլ ավելի է մեծանում՝ խորացնելով նաև բարձրագույն կրթության հասանելիության սահմանափակումների ռիսկը: Դասագրքերը և ուսուցիչների ընկալումները չեն մարմնավորում մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների վրա հիմնված՝ քաղաքացիական կրթության սկզբունքները: Փոխարենը, կրթության բովանդակությունը զգայուն չէ գենդերի հիմնախնդիրների նկատմամբ և չի համապատասխանում Տոլեդոյի սկզբունքներին:[39]

Կրթական համակարգի նկատմամբ կառավարական վերահսկողությունը լրջորեն խոչընդոտում է պատասխանատվության մակարդակի բարձրացման և որակի բարելավման գործընթացը:[40] Քաղաքական վերնախավը ներկայացված է համալսարաններ և դպրոցներ կառավարող խորհուրդների

---

[38] 2013-2014 ուս. տարում հանրակրթական ուսումնական հաստատությունների բաշխվածությունը Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի: Աղբյուրը՝ http://stat.armedu.am/?section=content&id=63&year=2013

[39] Ռ. Ծատուրյան, 2013 թ., «Գենդերային խնդիրները մանկավարժական միջավայրում», Երևան: Աղբյուրը՝ http://www.osf.am/wp-content/uploads/2014/01/Policy_paper_Ruzanna_Tsaturyan.pdf,
Հ. Հովհաննիսյան, Ա. Դավթյան, 2013 թ., «Հայոց եկեղեցու պատմության դպրոցական դասագրքերի բովանդակային վերլուծությունն ու դրանց ազդեցությունը երիտասարդ սերնդի վրա», Երևան: Աղբյուրը՝ http://www.osf.am/programs/policy-fellowship-initiative/policy-papers/?lang=am

[40] Liviu, M., Iwinska J., Geven K. Higher Education in Armenia Today: a focused review. Budapest 2013. CEU Higher Education Observatory.

կազմում,[41] ինչպես նաև կրթությունը ղեկավարող գերատեսչություններում:[42] Քաղաքական վերահսկողության մասին է վկայում այն փաստը, որ դպրոցների տնօրենների 70%-ն անդամակցում են իշխող կուսակցությանը, որի հետևանքով համակարգն ընտրությունների ընթացքում շահարկվում է՝ ծառայեցվելով քաղաքական նպատակներին:[43] Միջնակարգ կրթության հաստատությունները և նրանց աշխատողները վարչական կարևոր ռեսուրսի դեր են կատարում, որն ընտրությունների ընթացքում համակարգային մակարդակով լայնորեն շահարկվում է՝ ծառայեցվելով քաղաքական նպատակների:[44]

Առաջարկություններ

- Փոփոխություններ կատարել օրենսդրության և քաղաքականության մեջ՝ բացառելով գործադիրի վերահսկողությունը և կոռուպցիան կրթական համակարգում:
- Ձևավորել մասնակցային մեխանիզմներ, որոնք թույլ կտան ապահովել կրթական գործընթացների և որոշումների կայացման թափանցիկությունը և հաշվետվողականությունը:
- Քաղաքականության միջոցառումների իրագործմամբ ապահովել հանրակրթական ծառայությունների, ներառյալ՝ ավագ դպրոցների հասանելիությունը բոլոր երեխաներին՝ անկախ աշխարհագրական տարածքից, ազգությունից և գենդերից:
- Կրթության ոլորտում նոր մշակված և/կամ փոփոխված բովանդակային նյութի մեջ ապահովել մարդու հիմնարար իրավունքների արժեքների արտացոլումը՝ առարկային ներկայացվող գիտական պահանջները բավարարելուց զատ:

---

[41] Հայաստանի Համայնքների ֆինանսիստների միավորում, 2013 թ., «Հանրակրթության ֆինանսավորման պետական քաղաքականությունը»: Աղբյուրը՝ http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/State-Policy-on-General-Education-Financing.pdf

[42] Kataoka Sachiko, Shahverdyan Anush, Harutyunyan Hovhannes. 2013. Addressing governance at the center of higher education reforms in Armenia. Washington DC. World Bank. Retrieved from http://documents.worldbank.org/curated/en/2013/01/17748657/addressing-governance-center-higher-education-reforms-armenia

Բարձրագույն կրթության ոլորտում որակի երաշխավորման արտաքին հավատարմագրային կառույցը շահերի ուղղակի բախում ունի որոշումների կայացման առումով, քանի որ այն նախագահում է վարչապետը, ով նաև Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի խորհրդի նախագահն է:

[43] Policy Forum Armenia 2013. Corruption in Armenia. p31. Retrieved from: http://www.pf-armenia.org/document/corruption-armenia

[44] Հայաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրությունները, 2012 թ.: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրությունների դիտորդական առաքելություն: Վերջնական զեկույց: Վարշավա, էջ 12:

Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունները, 2013 թ.: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրությունների դիտորդական առաքելություն: Վերջնական զեկույց: Վարշավա, էջեր 12-13:

Հայաստանի խորհրդարանական ընտրությունների դիտարկումը, 2012 թ., Եվրոպայի խորհուրդ, էջեր 30-38:

- Երաշխավորել գիտական անկախությունը, անաչառությունը և հետազոտական համակարգերի անկողմնակալությունը՝ վերանայելով կրթության ֆինանսավորման մեխանիզմները և կրթական հաստատությունների միջև ֆինանսական ռեսուրսների բաշխման մեթոդաբանությունը:

Կրթական հատուկ կարիքներով երեխաների իրավունքները

2013 թվականի փետրվարին խորհրդարանը փոփոխություններ կատարեց «Կրթության մասին» և «Հանրակրթության մասին» օրենքներում, որոնցով նախատեսվեց, որ հանրակրթական ողջ համակարգը 2022 թվականի դրությամբ պետք է դառնա ներառական: Ո՛չ կրթության փորձագետները, ո՛չ Կրթության և գիտության նախարարության կամ Ֆինանսների նախարարության ներկայացուցիչները ի վիճակի չեն կանխատեսել ներառական դպրոցների դինամիկան: Ավելին, պետական բյուջեն կարող է բավականացնել ներառական ընդամենը 1,400 դպրոցների համար: Ավելի լուրջ խնդիր է այն, որ չկան լիարժեք ներառումը երաշխավորող ֆինանսավորման կայուն մեխանիզմներ:

Առաջարկություն

- Ապահովել հանրակրթության բարեփոխումների ռազմավարության և իրականացման միջոցառումների ծրագրի մշակումը՝ ապահովելով հանրակրթության ամբողջական ներառականությունը, ինչպես նաև նշված գործընթացին մասնակից դարձնել քաղաքացիական հասարակության լայն շրջանակներին:

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Հայաստանը, վավերացնելով մի շարք միջազգային փաստաթղթեր, աշխատողների իրավունքների պաշտպանությունը երաշխավորելու տարաբնույթ հանձնառություններ է ստանձնել: Այդ հանձնառությունները մեծ մասամբ ներառվել են աշխատանքային օրենսդրության մեջ, սակայն աշխատանքային պայմանագրերի կիրառության, աշխատանքի պայմանների, նվազագույն աշխատավարձի և հանգստի իրավունքի իրացման առումով դեռևս առկա են խնդիրներ:

Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի 2013 թվականի եզրակացությունների[45] հիման վրա պարզ է դառնում, որ Հայաստանը չի կատարում Եվրոպական սոցիալական խարտիայի պահանջները: Մասնավորապես, Հայաստանը չի կատարում պահանջները մասնագիտական առողջության և անվտանգության համարժեք քաղաքականության ապահովման, բուժօգնության բավարար անձնական ընդգրկման, ծերության թոշակների համարժեք նվազագույն մակարդակի, միջոցներ չունեցող միայնակ անձին վճարվող սոցիալական նպաստի համարժեք մակարդակի և միջոցներ չունեցող տարեցներին վճարվող սոցիալական նպաստի համարժեք մակարդակի առումներով:

Չնայած որ օրենսդրությունը հիմնականում համահունչ է միջազգային չափորոշիչներին, դրա կատարումը վերահսկելու արդյունավետ մեխանիզմներ չկան: Աշխատանքային տեսչությունը, որը պետք է վերահսկեր աշխատանքային օրենսդրության պահանջների կատարումը, 2013 թվականին միաձուլվեց Առողջապահության նախարարության համակարգում գործող՝ հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հետ: Չնայած որ աշխատանքային իրավունքների պաշտպանության լիազորությունները վերապահված են վերահսկողական այս նոր մարմնին, դրա գործառույթների 90%-ը վերաբերում է առողջության և անվտանգության հիմնախնդիրներին:[46] Իրավիճակը բարդանում է անկախ արհեստակցական միությունների բացակայության և իրա-

[45] Եվրոպական սոցիալական խարտիա (վերանայված), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտե, 2013 թվականի եզրակացություններ, Հայաստան:
Աղբյուրը՝ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/conclusions/State/Armenia2013_en.pdf

[46] Այս տեսչության 10 վարչություններից ընդամենը մեկն է նվիրված աշխատանքային իրավունքի խնդիրներին, որը նշանակում է, որ տեսչության աշխատանքի 90%-ը նվիրված է առողջության հիմնախնդիրներին:

վունքների պաշտպանության և վերականգնման այլ մեխանիզմների բացակայության պատճառով:

Աշխատանքային պայմանագրերը

Աշխատողների մեծ մասը սոցիալապես խոցելի է և բավարար չափով տեղեկացված չէ իր իրավունքների մասին. ուստի, իրավունքների խախտումները հաճախ չեն վերաճում հակասությունների: Հայաստանի Հելսինկյան կոմիտեի մշտադիտարկմամբ հաստատվեց, որ տարածված խնդիրներն են աշխատանքային պայմանագրերի բացակայությունը և պայմանագրերի խախտումները: Մշտադիտարկմամբ բացահայտվեց նաև, որ լայն տարածում ունի գործատուի սահմանած կամայական կանոնների խախտումների համար տույժեր նշանակելու պրակտիկան, որն արգելված է օրենսդրությամբ:[47]

Չնայած այն փաստին, որ օրենսդրությամբ նախատեսվում է, որ պայմանագրերը պետք է ստորագրվեն անորոշ ժամկետով (սակավաթիվ բացառություններով), պայմանագրերի մեծ մասը փաստացի ստորագրվում են սահմանված որոշակի ժամկետով: Որոշակի ժամկետով պայմանագրերը բացասական հետևանքներ են առաջացնում աշխատողների համար՝ աշխատողին դարձնելով ավելի խոցելի և նրան կախվածության մեջ պահելով պայմանագրի երկարաձգումից: Բացի դրանից, կրթական հաստատությունները հիմնականում խախտում են իրավական ակտերի պահանջները՝ պայմանագրերը ստորագրելով 9-10 ամիս ժամկետով: Այդ դեպքերում աշխատողներին չի տրամադրվում վճարովի արձակուրդ: Գործատուն խուսափում է 2-3 ամսվա սոցիալական վճարներից, ինչպես նաև տվյալ ժամանակահատվածի համար հաշվարկվող ստաժից:
Հանգստի իրավունքը հատկապես խնդրահարույց է ծառայություններ մատուցողների, օրինակ՝ սուպերմարկետների, տաքսի-ծառայությունների և նմանօրինակ այլ կազմակերպությունների դեպքում: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի մշտադիտարկմամբ հաստատվել է, որ տաքսու վարորդներն աշխատում են 24 ժամ՝ առանց հանգստանալու կամ շատ քիչ հանգստանալով: Սուպերմարկետներում հերթափոխները կազմակերպված են այնպես, որ աշխատողների հանգստի ժամանակը զգալիորեն պակաս է օրենքով սահմանված չափից: Արձակուրդները և տոն օրերը կա՛մ չեն տրամադրվում, կա՛մ տրամադրվում են անկանոն կերպով:

[47] ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 231-241:

Հարկային օրենսդրությունը մեծ բեռ է ստեղծում այն գործատուների համար, ովքեր ցանկանում են կատարել իրավական ակտերի պահանջները՝ գրանցելով իրենց աշխատողներին և վճարելով սոցիալական և այլ պարտադիր վճարները: Փոքր և միջին ձեռնարկությունների դեպքում իրավական ակտերի պահանջներին հետևելը պարզապես դառնում է ոչ շահութաբեր:

Խտրականությունը և աշխատողների խոցելիությունը. հավասար հնարավորությունների բացակայությունը

Զբաղվածության ոլորտում առկա է գենդերահեն խտրականություն, որի վկայություններն են կանանց թերներկայացվածությունը ղեկավար պաշտոններում և միևնույն պաշտոնը զբաղեցնող կանանց և տղամարդկանց միջև աշխատավարձի տարբերությունները: Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը հիմնականում պայմանավորված է նրանց հատուկ կարիքները հոգալու համար անհրաժեշտ տեխնիկական օժանդակության բացակայությամբ: 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործազուրկ էր հաշմանդամություն ունեցող աշխատունակ անձանց 91%-ը:[48] Ավելին, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն ՀԿ-ի տվյալներով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուց զատ այլ եկեղեցու հետևորդ լինելու պատճառով աշխատանքից հեռացվել է դպրոցների 20 ուսուցիչ:[49]

Առաջարկություններ

- Ստեղծել կառավարական հատուկ մարմին, որը լիազորված կլինի արդյունավետ վերահսկողություն իրականացնելու աշխատանքային իրավունքների պահպանության նկատմամբ:
- Փոփոխություններ կատարել ՀՀ աշխատանքային օրենսգրքում՝ սահմանելով աշխատանքային պայմանագիրը որոշակի ժամկետով կնքելու հստակ չափորոշիչներ:
- Իրականացնել միջոցառումներ՝ կանխելու խտրականությունն աշխատանքային իրավահարաբերություններում:

[48] Disability Armenia online. Retrieved from http://disabilityarmenia.am/am/10/free.html
[49] «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն: Աղբյուրը՝ http://www.religions.am/arm/news/

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Սեփականության իրավունքի խախտումները լայն տարածում ունեն, սակայն չկան խախտված իրավունքների վերականգնման դեպքում իրավական պաշտպանության համարժեք միջոցներ, քանի որ կառավարությունը չի կատարում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի («ՄԻԵԴ») որոշումները:

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով սահմանված գերակայության որոշման շրջանակն աղոտ է: «Հասարակության և պետության կարիքներ» հասկացությունը և դրա հիմքում ընկած «բացառիկ գերակա հանրային շահի» հասկացությունը շարունակաբար ապամեկնաբանվում են կառավարության կողմից: Դա օգտագործվում է որպես հիմք՝ մասնավոր սեփականությունն անհիմն կերպով օտարելու համար, հաճախ առանց պատշաճ հատուցման, ինչպես նաև մասնավոր սեփականությունը մասնավոր բիզնես-ծրագրերին փոխանցելու համար, որոնք սովորաբար ղեկավարվում են հարգանք չվայելող անձանց կամ ընկերությունների կողմից, որոնք կապեր ունեն բարձրաստիճան պետական պաշտոնյաների կամ օֆշորային գոտիների հետ: Տարածքը գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշումները հաճախ կայացվում են՝ ի խախտումն իրավական նորմերի: Սակայն չկան դեպքեր, որոնցով հայաստանյան դատարանները վճիռներ կայացրած կլինեին սեփականության սեփականատերերի օգտին և/կամ կասկածի տակ դրած կլինեին պետական կառույցների որոշումները:

Սեփականության օտարման պրակտիկան

«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետությունը չի երաշխավորում իր այն քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, ում սեփականությունն օտարվում է «հասարակության եւ պետության կարիքների համար»: Թեպետ որոշումը կայացնողը կառավարությունն է, սեփականության օտարման մասին պայմանագրերը ստորագրվում են նախկին և նոր սեփականատերերի միջև, և կառավարությունը հրաժարվում է որևէ պատասխանատվությունից: Ներկայումս «պետական կարիքների» հարյուրավոր անօթևան զոհեր կան, ովքեր խաբվել են ընկերությունների կողմից, որոնք

խոստացել են նրանց սեփականության փոխարեն նոր բնակարաններ տալ, որոնք սակայն չեն կառուցվել ժամանակին, կամ որոնք վաճառվել են մեկից ավելի սեփականատերերի, կամ պարզապես սնանկ են ճանաչվել պայմանագրային այլ պարտավորություններ չկատարելու համար: Ներկայումս 365 սեփականատեր անօթևան է դարձել, քանի որ ընկերություններից մեկը սնանկ է ճանաչվել,[50] մի քանիսը բռնագրավված գույքի փոխարեն չեն ապահովել նոր գույքի կառուցումը,[51] մյուսներն էլ պատրաստ բնակարանները վաճառել են մի քանի սեփականատերերի:[52] Սյունիքի մարզում 34 ընտանիք 2005 թվականին ճանապարհի կառուցման համար զրկվել է իր մասնավոր հողատարածքներից՝ առանց ծանուցման և առանց պայմանագրերի: Փոխհատուցման խոստումները մնում են օդում կախված, ընդ որում՝ կորցրած հողերի համար բնակիչներից մինչ օրս գանձվում է գույքահարկ:[53]

ՄԻԵԴ-ը մոտ 10 որոշումներ է կայացրել, որոնցով ճանաչել է Երևանի կենտրոնում «գերակա հանրային շահ» ճանաչված տարածքի սեփականատերերի իրավունքների խախտումները, սակայն դա դեռևս չի առաջացրել համակարգային փոփոխություններ: Մեկ դեպքում կառավարությունը չի փոխհատուցել քաղաքացիների գույքի ոչնչացման համար նախատեսված գումարը:[54] Մյուս դեպքերում կառավարությունը, խախտելով հաշտության համաձայնության մասին որոշումը, հայցվորներին որոշ բնակարաններ է առաջարկել նորակառույց մասնավոր շենքերում, որոնք, սակայն, արդեն փաստացի վաճառված են եղել այլ մարդկանց:[55]

Հանրային սեփականությունը կառավարվում և օտարվում է՝ չապահովելով հանրության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին, չնայած որ մի շարք նման գործելակերպ արգելված է մի շարք իրավական ակտերով: Վարչական մարմինների որոշումները չեն վիճարկվում դատարաններում, քանի որ քաղաքացիների համար դժվար է ապացուցել, թե ինչպես են խախտվել իրենց իրավունքները: Ավելին, հասարակական կազմակերպությունները հանրային շահի և ռեսուրսների հետ կապված գործերով չեն ստանում պատշաճ հայցվորի կարգավիճակ: 2010 թվականի սեպտեմբերին Սահմանադրական դատարանն իր որոշմամբ հաստատեց, որ սահմանված որոշ ոլորտներում արդարադատությունը պետք է հասանելի լինի ՀԿ-ներին, եթե այդ ոլորտներում իրավունքների պաշտպանությունը նախատեսված է

[50] «Դաուսթաուն Երևան» ՓԲԸ:
[51] «Ի էմ Ս» ՓԲԸ, «Կենտրոն-կանաչապատում» ՓԲԸ, «Լիդեր Մոբիլ» ՍՊԸ, «Գրանդինվեստ» ՍՊԸ, «Դվին Հոլդինգ» ՍՊԸ, «Ռեգիոն Ինվեստ» ՍՊԸ, «Local Developers» ՍՊԸ, «Նարեկ-Գրադ» ՍՊԸ:
[52] «Գապբնակշին» ՍՊԸ, «Narek-Shelter» ՍՊԸ, «Local Developers» ՍՊԸ:
[53] Ազատություն, առցանց: Աղբյուրը՝ http://www.azatutyun.am/content/article/25301611.html
[54] *Թունյանը և այլք ընդդ. Հայաստանի*, ՄԻԵԴ:
[55] *Բաղդասարյանը և Զարիկյանցն ընդդ. Հայաստանի, Դասաբյանը և այլք ընդդ. Հայաստանի*, ՄԻԵԴ:

ՀԿ-ների կանոնադրություններով, ինչպես նաև՝ այն գործերով, որոնցով ավելի ցածր ատյանի դատարաններն անարդյունավետ են գտնվել:

Առաջարկություններ

- Փոփոխություններ կատարել «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում՝ հստակեցնելով «բացառիկ գերակա հանրային շահի» ճանաչման հիմքերը, պարտադիր դարձնելով պատշաճ հիմնավորումները և շահագրգիռ անձանց մասնակցությունը «կարիքների» գնահատմանը, նախատեսելով մասնավոր սեփականության օտարման դեպքում պատշաճ փոխհատուցման ապահովման և կառուցապատողների կողմից պայմանագրերի պահանջների կատարման պետական երաշխիքները:
- Համարժեք պաշտպանություն ապահովել մասնավոր սեփականության օտարումից տուժած բոլոր անձանց համար՝ կորուստների և վնասների համարժեք հատուցման եղանակով:
- Օրինական կարգավիճակ տալ ՀԿ-ներին, որպեսզի նրանք իրավունք ունենան վիճարկել հանրային սեփականության օտարման կամ չարաշահման հետ կապված համապատասխան վարչական մարմինների անօրինական որոշումները և գործողությունները:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ընդհանուր իրավիճակը և օրենսդրական դաշտը

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային կոնվենցիաներ, որոնք նպատակաուղղված են մշակութային իրավունքների պաշտպանության ապահովմանը, մասնավորապես՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը («ՏՍՄԻՄԴ») և Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան: Նշված իրավունքը երաշխավորված է նաև Սահմանադրության 40-րդ հոդվածով: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքը և պրակտիկան չեն համապատասխանում հուշարձանների պաշտպանության միջազգային չափորոշիչներին:[56]

Մշակութային ժառանգության ոչնչացումը

2000-ականների սկզբներին կառավարությունը մի շարք որոշումներ էր կայացրել, որոնցով Երևանի պատմական կենտրոնում բազմաբնակարան շենքերի կառուցման թույլտվություններ էր տվել բարձրաստիճան պետական պաշտոնյաների հետ կապված ընկերությունների կամ օֆշորային գոտիներում գրանցված կազմակերպությունների: Հետևանքն եղավ այն, որ ոչնչացվեց պատմական ժառանգության մոտ 29 շենք: Մոտ մեկ տասնյակ շենքեր ապամոնտաժվեցին և ձևախեղված տեսքով վերակառուցվեցին: 14 շենք ներառվեց տեղափոխման ենթակա շենքերի ցանկում: Ավելին, վտանգվեցին պաշտպանության ենթակա ևս 15 հուշարձան, քանի որ դրանց հետ կապված համապատասխան հողակտորները հատկացվեցին շինարարության համար: Կառավարությունը և Երևանի քաղաքապետարանը չկատարեցին ապամոնտաժված շենքերից մի քանիսը վերականգնելու իրենց խոստումները: Կառավարությունը չի թարմացրել օրենսդրությունը և Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի (որը Հայաստանի կողմից վավերացվել է 2008 թվականին) պահանջները կատարելու ուղղությամբ չի վերանայել իր որոշումները. դա անելու դեպքում կփրկվեին դեռևս կանգուն մնացող հուշարձաններից առնվազն 24-ը՝ հաշվի առնելով, որ Կոնվենցիայով արգելվում է «պաշտպանվող որևէ հուշարձանի

[56] Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայով արգելվում է պաշտպանվող որևէ հուշարձանի մասնակի կամ ամբողջական տեղահանումը, բացառությամբ երբ այդ հուշարձանների ամբողջականությունը պաշտպանելու միակ հնարավոր եղանակը դրա տեղահանումն է:

մասնակի կամ ամբողջական տեղահանումը, բացառությամբ երբ այդ հուշարձանների ամբողջականությունը պաշտպանելու միակ հնարավոր եղանակը դրա տեղահանումն է»: Փոխարենը, կառավարությունը շարունակում է որոշումներ կայացնել պատմամշակութային հուշարձաններ պարունակող հողակտորները ժամանակակից շինարարության համար հատկացնելու մասին:[57] Ավելին, տասնյակ շինություններ կան, որոնք նախկինում ներառված են եղել պաշտպանվող հուշարձանների ցանկում, սակայն դուրս են բերվել ցանկից և այլևս ենթակա չեն պաշտպանության:

Չնայած որ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքով նախատեսվում են այն դեպքերը, որոնցում կարելի է տեղափոխել պաշտպանվող հուշարձանները, անշարժ հուշարձանների տեղափոխության կառավարության պրակտիկայով փաստացի խախտվում է նշված օրենքը: 2010-2011 թվականների ընթացքում կառավարությունը որոշել է Գյումրիից Երևան տեղափոխել անշարժ հուշարձանների ցանկում ներառված 4 որմնանկար: Նմանապես, 2012 թվականին կառավարությունը որոշումներ է կայացրել 6,000 տարվա վաղեմություն ունեցող 63 անշարժ հուշարձան 4 տարով դուրս բերել իրենց պատմական վայրերից: Ամբողջովին արհամարհվեցին հուշարձաններն իրենց տեղը վերադարձնելու մասին 8,000-ից ավելի քաղաքացիների տարբեր ակցիաները և միջնորդությունները:

Երևանի կենտրոնում գտնվող «Փակ շուկան», որը 1900-ականների կեսերի արտառոց ճարտարապետական հուշարձան է, 2012-2013 թվականներին կամայականորեն ձևախեղվեց՝ ի խախտումն գործող օրենքի,[58] նպատակ ունենալով այն վերածել սուպերմարկետի՝ խորհրդարանի անդամներից մեկին պատկանող ցանցում: Երևանի օդանավակայանի նախկին շենքը, որը խորհրդային մոդեռնիստական ճարտարապետության առավել դիտարժան կառույցներից է, ներկայումս կանգնած է քանդման ռիսկի եզրին: Այս ողջ ընթացքում մշակույթի նախարարությունը լռություն է պահպանում, թեպետ հենց այդ նախարարությունն է եղել վերոհիշյալ որմնանկարները Գյումրիից Երևան տեղափոխելու, ինչպես նաև՝ մ.թ. 1-ին դարի անտիկ շրջանի տաճարի պաշտպանված գոտու տարածքում սրճարան կառուցելու գաղափարների հիմական նախաձեռնողը: Միևնույն ժամանակ, նախարարությունը այլ կառույցների, օրինակ՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ենթակայությամբ գործող հուշարձանները վերահսկելու համար չունի բավարար լիա-

[57] ՀՀ կառավարության 2013 թվական օգոստոսի 29-ի թիվ 958-Ն որոշումը:
[58] «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքը:

զորություններ, և չի վերահսկում պաշտպանության ենթակա եկեղեցիների վերանորոգման աշխատանքները:

Առաջարկություններ

- Ազգային օրենսդրությամբ նորովի սահմանել «մշակութային ժառան- գություն» և «մշակութային իրավունքներ» հասկացությունները՝ հետևե- լով միջազգային չափորոշիչներին: Վերանայել պաշտպանվող հուշար- ձանների ցանկում օբյեկտների ներառման չափորոշիչները: Օրենսդրա- կան բացերը լրացնելու ճանապարհով խստացնել համապատասխան կառույցների նկատմամբ իրականացվող վերահսկողությունը և ավելի խիստ պատասխանատվություն սահմանել դրանց ոչնչացման կամ վնասման համար:
- Փոփոխություններ կատարել «Պատմության և մշակույթի անշարժ հու- շարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործ- ման մասին» օրենքում՝ արգելելով պաշտպանվող հուշարձանների մաս- նակի կամ ամբողջական տեղահանումը, բացառությամբ երբ այդ հու- շարձանների ամբողջականությունը պաշտպանելու միակ հնարավոր եղանակը դրա տեղահանումն է: Վերանայել շինությունները պաշտպան- վող հուշարձանների ցանկում ներառելու չափորոշիչները: Խստացնել պատմության և մշակույթի հուշարձանների օգտագործման նկատմամբ իրականացող վերահսկողությունը և ավելի խիստ պատասխանատ- վություն սահմանել դրանց ոչնչացման կամ վնասման համար:
- Ուժը կորցրած ճանաչել կառավարության այն որոշումները, որոնցով նախատեսվել է անշարժ հուշարձանների տեղահանում, քանդում և/կամ ձևախեղում, ինչպես նաև՝ ապահովել դրանց ցուցադրումը դրանց գտնվելու պատմական վայրերի տարածքներում: